

ՕՐՈՐՈՑԱՅԻՆԸ՝ ՈՐՊԵՍ ԱՐԹՆԱՑՈՒՄԻ ՏԵՔՍ  
ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ԵՎ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՄՏԱԾԻՐՈՒՄ<sup>1</sup>

*Հասմիկ Մատիկյան*

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

**Բանալի բառեր՝** *օրորոցային, հեղինակ, բանասաց, բանահյուսություն, օրորոց, քուն, բանաձև, համատեքստ, տեքստ:*

Աշխատանքում դիտարկվում է օրորոցային՝ որպես արթնացումի տեքստ: Ուսումնասիրության ծիրում են թե՛ բանահյուսական, թե՛ հեղինակային օրորները, որոնք բովանդակային տարբեր շերտերում ամփոփում են զարթնումի՝ զարթոնքի բաղադրիչներ:

**Նախաբան.** Օրորոցային՝ որպես քնամուտի տեքստ, ունի հարուստ բովանդակային արտահայտություն թե՛ մանկական բանահյուսության, թե՛ մանկական գրականության և թե՛ ժողովրդական բանահյուսության համատեքստերում: Մանկական բանահյուսության տիրույթում օրորոցային տեքստն ունի բավականին հստակ ընդգծված քնամուտի տարբեր, որոնք արտահայտվում են *օրո՛ր, օրո՛ր, նանի՛կ, նանի՛կ* կամ այն բառերով, որոնք բացահայտ քուն բերող արտահայտություններ են: Հեղինակային ստեղծագործություններում օրորոցայիններն ունեն ուշագրավ բովանդակություն. կիզակետում ընդհանուր առմամբ հասուն հասցեատերն է: Հեղինակային օրորներում արտացոլվում ու վեր են հանվում մանկաշխարհի թեմաներ:

Այս առիթով նշենք մեր ներկայացրած զեկուցումը «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» 10-րդ միջազգային գիտա-ժողովին /տե՛ս Հ. Մատիկյան, Մանկական բանահյուսության ընդհանուր նկարագիրը

<sup>1</sup> Հոդվածը նվիրում եմ 2020 թվականի Արցախյան պատերազմի հերոսների անմահ հիշատակին:

Ժողովրդական բանահյուսության համատեքստում/հայ և անգլալեզու լեզվամշակույթներում, Գյումրի, 27-29 սեմպոտեմբերի, 2019/:

Թե՛ գեղջկական, թե՛ քաղաքային մշակույթում առանձնակի ուշադրության են արժանի երգային այն տեքստերը, որոնք *արթնացնող*, ոտքի հանող բնույթ ունեն: Արթնացում տեքստի բացառիկ օրինակ է Կոմիտասի «Ղե՛, էլ» հորդորական երգը.

Ե՛լ, է՛լ, է՛լ,

Ղե՛, է՛լ, ղե՛, է՛լ, ղե՛, է՛լ, ղե՛, է՛լ,

Ղե՛, է՛լ, ղե՛, է՛լ, ղե՛, է՛լ, ղե՛, է՛լ,

Ե՛լ, է՛լ, է՛լ:

Օրն անցավ,

Քամին էլավ:

Մութն ընկավ՝

Աստղերն էլան:<sup>2</sup>

Նշված տողերում *էլ* արմատը դառնում է առանցքային. մուտքային խոսքում *էլնէլ* բայի հրամայական դիմելաձևով, ավարտուն խոսքում՝ *էլավ*, *էլան* բայական միավորներով:

Ըստ էության, որոշ օրորոցայիններ ունեն ճանաչողական բնույթ. օրորասացը կամ օրորի տեքստի հեղինակը դեռևս օրորոցից երեխային սերմանում է *հայրենասիրություն, արհիություն, պայքարելու* կարողություն, որոնք լեզվական արտահայտման մակարդակում ունեն ուրույն բնութագիր: Այս համատեքստում մեջբերենք Խ. Հայրիկի խոսքը. «Ուրեմն, ո՛վ դուք ծնողներ, որ արժանացել եք հայր ու մայր վեհ անուններին, որ աշխարհում տուն ու ընտանիք եք կազմել, եթե կցանկանաք, որ ձեր վախճանից հետո ձեր տունը, ձեր գերդաստանը, ձեր ամբողջ ժառանգությունն ու ձեր գործը հավերժ մնան, ձեր անունն ու հիշատակն աշխարհում օրհնությամբ հիշվին, ստույգ ու ճշմարիտ օրհնության պատրաստեցե՛ք ձեր զավակներին: Անհոգ զանցառությամբ մի՛ սպասեք՝ ձեր այս նվիրական պարտականությանը ձեր մահվան տագնապի օրը կատարելու, երբ անբարբառ են լինելու մարդու շրթունքներն ու բերանը, այլ հենց *խանձարուրից ու օրորոցից* սկսեք ձեր օրհնության դասերը, այսինքն՝ ծնողական դաստիարակությունն ու խրատը, որ լի ու զեղուն օրհնություն են բերում ողջ տանն ու ընտանիքին»<sup>3</sup> (*ընդգծումները մերն են*): Հայրենասիրական գործառույթ ունեցող օրորոցային տեքստերը «արթնացնող», «քնաթափ» տեքստեր են: Ժողովրդական *արթնացնող* օրորոցային է *Ջարթի՛ր լառ-ն՝ Մշեցու մօր երգը* տարբերակով: Տեքստի հասցեատերը լառն է՝ օրորոցում գտնվող երեխան.

Ի՞նչ անիծեմ թուրք ասկերին,

Որ սպանեց ջոջ Աբոյին,

Մըր յոյս թողեց օրորոցին,

Ջարթի՛ր, լառ, մըռնիմ քրզի<sup>4</sup>:

*Երեխա* բառը տեքստի հյուսվածքում չի հիշատակվում: Ավելին՝ վերջինս փոխանվանաբար է օգտագործված՝ *օրորոցին*: Այստեղ նկատելի է դասային սխալ՝ *երեխա /շնչ./- օրորոց/անշունչ/*:

Է. Աղայանի «Արդի հայերեն բացատրական բառարան»-ում նշված բառերը ունեն բազմիմաստ նշանակություն. *գարթնել*-1. արթնանալ, քնից սթափվել, 2.... ուշքի

<sup>2</sup> Կոմիտաս, Երկերի ժողովածու, №3, Խմբերգեր //(Խմբ.՝ Ռ. Ա. Աթայան). Երևան, «Հայաստան» հրատ., 1969, էջ 29:

<sup>3</sup> **Խրիկյան Հայրիկ**, Դրախտի ընտանիք, Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2011, էջ 191:

<sup>4</sup> Շիրակ երգարան. 50-ամեակ, կազմող եւ խմբագիր **Կարապետ Հաննէսեան**, Պէյրութ, 2010, էջ 317:

գալ, 3. փխբ. գիտակցության գալ, աչքերը բացվել, գիտակից դառնալ, 4. բուռն գործողությունների դիմել, ընդվզել, 5. ծագել, առաջանալ (ցանկության՝ փափագի մասին), 6. զարթոնք ապրել, վերակենդանանալ, 7. շարժման՝ գործունեության մեջ մտնել, սկսվել 8. Հիշողության մեջ վերականգնվել, մտաբերվել...վերածնունդ, ինքնագիտակցության գալը<sup>5</sup>:

Բանահավաքչական աշխատանքների ժամանակ հարցումներ ենք կատարել հիշյալ օրորոցայինին առնչվող. հարցվողների մի մասն ընդգծում էր, որ *Չարթի ըր, լառ*-ն չի կարելի օրորոցային համարել, քանի որ չունի հանգստացնող, մեղմիվ գործառույթ, մյուս խումբն էլ նշում էր, որ երգում տեղ գտած *օրորոց* բառը և տեքստի իմաստային ներքին կրումը ենթադրում են երգի՝ օրորոցային լինելու իրողությունը:

Ըստ էության, *Չարթի ըր լառ*-ն երգվել է ժողովրդին ոգեկոչելու, ոգենորոգելու համար, և իրապես երգի հասցատերն է ոչ միայն օրոցքի երեխան, այլ նաև մեծահասակ ունկնդիրը: Այս առիթով նշենք կինոռեժիսոր Հենրիկ Մալյանի «Եռանկյունի» ֆիլմը, որտեղ Ռ. Մաթևոսյանը ռազմաճակատ մեկնողներին ոգեշնչելու համար երգում է «Չարթի ըր լառ»-ն: *Չարթի ըր, լառ՝* երգի բացառիկ նմուշ է հետևյալը.

*Չարթի ըր, լառ՝ մեռնիմ քեզի*

*Չարթի ըր, լառ՝ օգնե մեզի...*

Գնանք հասնենք մեր Հայաստան,

Մենք էլ փրկենք մայր Հայաստան:<sup>6</sup>

Թեմատիկ ուսումնասիրության շարքում առանձնացնենք Հ. Շիրազի *Չարթի ըր, լառ, մեռնիմ քեզի* վերնագրով բանաստեղծությունը, որը նույնպես աղերս ունի մանկան օրորոցի՝ հույսի ու հավատի հետ.

*Օրորելով մանկիկիս*

*Ա՛խ, մեծացիր դու այնքան,*

*Օրորոցը՝ հույսիս հետ՝*

*Հսկայացիր դու այնպես,*

*Աղոթքները մայրիկիս*

*Որ լեռն իբրև մի մանկան՝*

*Այսպես էին հյուսում բերդ.*

*Գրկելով էլ տուն բերես...<sup>7</sup>*

*Այնքան, այնպես* ցուցական դերանունների կիրառմամբ և հումանիշ բայերի իմաստային աճով /*մեծացիր, հսկայացիր*/ հեղինակն ստեղծում է ամբողջական մթնոլորտ:

Շիրազի բանաստեղծական աշխարհում *օրոցք/ օրորոց* և *հույս* բառերը ունեն մեծ հաճախականություն: Ըստ էության բանաստեղծը հույսը կապում է օրոցքում գտնվող նորաբարուրի հետ: Այս առիթով մեջբերենք հատվածներ հեղինակի «Հայոց աստղը» ստեղծագործությունից.

*Դյուցազուններ էլան փնտրումի ճամփին՝ ընկան վախվորած՝*

*Հույսն օրոցք դրած՝ դարեր ու դարեր,*

*Ու էլնում, փնտրում, բայց չէին գտնում աստղը մեր կորած*

*Դարեր ու դարեր, դարեր ու դարեր:*

<sup>5</sup> Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976, «Հայաստան» հրատ., հ.1, էջ 366:

<sup>6</sup> Հայ ազգագրություն և բանահյուսություն, Գեղարքունիք, Ռ. Գրիգորյան, հ. 14, 1983, էջ 201:

<sup>7</sup> Շիրազ Հ., Երկեր, հ. 4, Երևան, «Սովետական գրող», 1986, էջ 66:

«Բիրլիական» պոեմում մեծ հմտությամբ բանաստեղծն օգտագործել է արտահայտչական ու պատկերավորման բոլոր հնարները.

*Եվ կովի ելավ մահվան դեմ մահով,-*

*Գերեզմանի դեմ դնելով մանկան*

*Ոսկի օրոցքը՝ իր հույսն օրորեց...*

Մեծ քնարերգակի պատկերավորման համակարգում օրոցքի ընկալման չափանիշները միանգամայն այլ են՝ սովորական օրոցքից վեր, որը ներկայացվում է վերացարկումով: Հեղինակի գուգորդական մտածողությունը՝ մարդ էակից ընդհուպ տիեզերք, բացառիկ է. օրոցքը դառնում է պոետիկայի կենտրոն, բնության ու տիեզերքի օրոցք:

Համանման մերձիմաստ տեքստեր են ստեղծվել Ռ. Պատկանյանի կողմից, որոնցից երկուսը՝ «*Վանեցու մոր երգը*», «*Աղասու մոր երգը*» հորդոր, ուղերձ տեքստեր են: Գերակա բաղադրիչ է համարվում «զարթնիր»-ը, որը փոխում է քնամուտի հիմնական գործառույթը:

Ուշադրության է արժանի *արթնանալ* և *քնել* բայերի իմաստային շերտերի մեկնությունը: *Արթնանալ* բայն ունի *քնից սթափվել*, *զարթնել*, փոխաբերական իմաստով *աչալուրջ՝ ուշադիր լինել*, *անհոգությունից՝ անգործությունից սթափվել*, *գիտակցության գալ*<sup>8</sup>: Ուշագրավ է նաև *քնել* բայի իմաստները՝ *քուն մտնել*, *քուն լինել*, փոխ. իմաստով *զգոն՝ շրջահայաց չլինել*: Ըստ էության, արթնացնող օրորոցային տեքստերը նպատակ ունեն մանուկ ունկնդրին օրորոցից դարձնելու արթնամիտ, զգոն: Հասկանալի է, որ խոսքը այստեղ ֆիզիկապես արթուն լինելու մասին չէ: // Պրզտի տրդա, չէ՛մ օրորիլ օրորանքըդ, որ քուն լաս//, Հայ աղբարքըդ ոտքի ելան, մենակ դու՞ եդ պիտ մընաս//, *Չարթե՛, հոգիս, անուշ քունեդ, թո՛ղ աչքերդդ լուս տեսնին*//, Արևմուտքեն արև ծագեց, բախտը բանեց հայ ազգին//<sup>9</sup>:

*Աղասու մոր երգն* ունի *զարթիր* բաղադրիչով սկսվածք, որը տեքստում պարբերաբար շեշտվում է՝ դառնալով յուրօրինակ կրկնակ. // *Չարթի՛ր, մանուկ իմ նազելի, բա՛ց այդ պայծառ աչերը*, // Թերթերունքեդ քունը թոթվե՛, գիրկը հանգիր քու մորը//, Բավ քեզ որքան բարի հրեշտակք հեքիաթ ասին երագում//, Այժմ արի՛ քեզ այն պատմեմ, ինչ պիտ տեսնես աշխարհում//<sup>10</sup>: Վերոնշյալ տեքստում նշված *քունը թոթվե* արտահայտությունը արթնումի ուրույն նկարագիր է:

Գործողությունների թվարկմամբ լուծվում է առաջադրված խնդիրը՝ «ոտքի է ելնում» մանուկ ունկնդիրը, հեղինակը կամ օրորասացը երեխային տեսնում է մոտալուտ ժամանակի մեջ, ժամանակային կտրվածքի մեջ արձանագրում է, որ որդին պատրաստ է պայքարի. // *Հա՛յ եղբայրներ, քիչ էլ կացեք, իմ Աղասին զարթեցավ*//, // *Գոտին կապեց*, թուրը կախեց ու իր նժույգ ձին նստավ//:

*Գոտին կապել* բայական արտահայտությունը երկպլան մեկնություն է ձեռք բերում մեր ուսումնասիրության տիրույթում. մի կողմից անվանական, մյուս կողմից՝ փո-

<sup>8</sup> Մալխասեանց Ս., Հայերեն բացատրական բառարան, հ. 1, էջ 263, Հայկական ՍՍՌ Պետհրատ., Երևան, 1944:

<sup>9</sup> Պատկանյան Ռ., Երկեր, Երևան., «Սովետական գրող», 1980, էջ 89:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 79:

խաբերական: *Գոտին կապել*-ը համագոր է գոտեպնդվել, գոտեմարտի պատրաստ լինել իմաստներին: Մեջբերենք հետևյալ դարձվածքային կապակցությունները *գոտի(կ)* բառային միավորով. 1. *մեջքին այսինչ գոտիկը կապել*- այսինչի վիճակին անցնել, իբրև այսինչ մեջտեղ ելնել, 2. *գոտիկը վրա կապել/բրբ/*- իր ներսը պահել, 3. *գոտին լայն կապել*- լավ ապրուստ ունենալ, այդպիսի ապրուստի հասնել<sup>11</sup>:

*Նժույգ ձի* բառային երկմիավորով առավել է սաստկանում պայքարի մեկնելու ոգին:

Ակներև է, որ հեղինակային վերը բերված տեքստի գրական կերպարը ընդհանրություն ունի Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի գլխավոր հերոսի՝ Ադասու հետ. «Թուրքերը նրա անունը լսելիս լեղապատառ էին ըլում: Շատ անգամ, կոհիվ քցած վախտը հենց նրա ձեռքն իմանում էին թե չէ, ճանճի պես ցրվում, դես ու դեն էին կորչում, գյում ըլում: Ավելին անունը Ասլան բալասի էին դրել»<sup>12</sup>:

Հայ միջնադարյան քնարերգության մեջ Պաղտասար Դպիրի՝ «Ի ննջմանէդ» տաղը հայրենիքի հանդեպ անսահման սիրո ու գովքի արտահայտություն է, նաև զարթնումի պատգամ.

*Ի ննջմանէդ արքայական*

*Էհաս նշոյլն արեգական,*

*Չարթի՛ր, նազելի իմ, զարթի՛ր,*

*Չարթի՛ր, նազելի իմ, զարթի՛ր.<sup>13</sup>*

*Չարթի՛ր, նազելի իմ, զարթի՛ր*-ը՝ որպես կրկնակ տող, առանցքային, գաղափարակիր տող է:

Շնորհալու գրչարվեստը ևս հարուստ է արթնացումի տեքստերով.

*Չարթի՛ք, փա՛նք իմ, զարթի՛ք,*

*Մանկունք վերինն Միոնի. ալէլուիա:*

*Եւ ես զարթեայց առաւօտուց. ալէլուիա:*

*Չարթի՛ք ընդ զուարթունս,*

*Չարթի՛ք և մի՛ ննջեք՝*

*Նման յիմար կուսից նիրհեք. ալէլուիա<sup>14</sup>:*

Օրորոցային տեքստերում *արթնանալ* բայն ունի բացառիկ իմաստավորում. օրոր երգողը բառային տարբեր կիրարկումներով է հյուսում իր խոսքը՝ երեխային քնից հետո արթուն տեսնելու մեծագույն ցանկությամբ, ինչպես բանահյուսական օրորի այս պատառում.

Քե դնեմ օսկի ուրուրոց,

Շուտով քնես, բարով զարթնես,

Վերեդ քաշեմ մարկրտե ծածկոց.

Իմ վարդ որդի, խուկուտ եմ ես<sup>15</sup>:

Ժողովրդական ընկալմամբ երկար քունը վտանգավոր է՝ շուտ է հոգնեցնում, թմրեցնում: Այս առիթով նշենք՝ *քունը քուն կբերե* արտահայտությունը, որը հաճախ նույնացվում է մեծ քնին՝ մահվանը:

<sup>11</sup> **Բեդիրյան Պ.**, Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, ԵՃ հրատ., Երևան, 2011, էջ 353:

<sup>12</sup> **Աբովյան Խ.**, Վերք Հայաստանի, Երևան, ԵՃ հրատ., 1981, էջ 62:

<sup>13</sup> Հայ հին և միջնադարյան քնարերգություն (կազմ.՝ **Ս. Ս. Հակոբյան, Է. Պ. Չալիկյան**), «Լույս», Երևան., 1987, էջ 387:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 158:

<sup>15</sup> **Գրիգորյան Ռ.**, Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր, Երևան, Հայկ.ՍՍՀ ԳԱ հրատ., 1970, էջ 59:

Բանասացներից Շուշի Թումանյանը<sup>16</sup> մեզ հետ ունեցած մասնավոր զրույցում հատկանշեց. «Օրորոցային երգերը հանգստանալու լուսադյոն միջոցն է թե՛ փոքրիկիս, թե՛ ինձ համար: Երգելով մեր հինավուրց օրորները միաժամանակ նաեւ վերլուծում եմ երգերի բառերը՝ փորձելով հասկանալ մեր նախնեաց յոյզերը: Ի վերջոյ ամէն օրորոցային նախեստաջ յոյզերի շղթայ է, որն անմիջականօրէն փոխանցում է ձագուկին երգողի ձայնի ելեւէջներով: Օրորոցային երգը նաեւ հանդարտեցնում է մօր կամ երգողի փոթորկայոյց հոգին եւ անգամ մտահոգիչ դրվագներ նկարագրող երգերից երեխային փոխանցում միայն դրականը, որի արդիւնքում էլ երեխան քնում է: Նման մի օրինակ է Մասնա օրորոցայինը, որի մէջ այսպիսի բառեր են հնչում՝ «...ասկեար բռնէ սարեր բոլոր, հայոց հարսներ մացին մոլոր»: Այսպիսով պարզ է դառնում երգող մօր հոգեվիճակը: Վստահաբար, մայրը երգել է իր ցարը՝ ցարը պահելով իրէն, իսկ երգը՝ որպէս ողբերգիչ ուժ փոխանցել ձագուկին: Ժամանակի ընթացքում ես էլ սկսեցի երգել իմ հոգեվիճակն ու սրտիս ասելիքը իմ փոքրիկին: Եւ ստացուեց այնպէս, որ օրինակ յայտնի «Տուրի» օրորոցայինի երաժշտութիւնը իմ երգում նաեւ այլ բառապաշարով արտայայտուեց»:

«Հէյրուր, հէյրուր, բուրի կենիմ իմ ձագուկին,      Բուրի կենիմ, դուն բուրենաս,  
Իմ անդրանիկ քաջ զաւակին, հէյրուր, հէյրուր,      Դուն պստիկ իս քաջ այր մեծնաս,  
Ազգիդ արժան Զինուոր դառնաս:

Բանասացը զրույցի ընթացքում առանձնացրեց. «Մեծ սիրով եւ ամէն օր երգում եմ նաեւ Անդրանիկ Աթովանցի բառերով եւ իմ երաժշտութեամբ այս օրորոցայինը»:

Քնի՛ր հանգիստ, զաւակս,      Որ թելերդ ամրանան,  
Քնի՛ր դու անուշ քնով,      Թեւաթափը մոռանան:  
Քնի՛ր, քնով զօրացիր,      Քնի՛ր հանգիստ, զաւակս,  
Որ յաղթես ամէն խնդիր:      Հոգուդ աչքերը բացիր,  
Քնիր հանգիստ, զաւակս,      Քո էութեան խորքերի  
Քնից զօրութիւն քաղիր,      Իմաստութեամբ թարմացիր:

Օրորասացը օրորոցային երգելով երեխային կոչ է անում ոչ թե քնել, այլ խոսել ու «ոտքի կանգնել»: Բանաձևային մտածողությամբ, մասնավորապէս փաղաքուշ խոսքերով է տեքստը առանձնանում՝ *ծենիտ մատաղ, ջանիտ մատաղ*:

Մուրազ ունեմ ես քեզ տալու,բալա ջան, *Խոսա, խոսա, ծենիտ մատաղ, այ՛ բալա*,  
Առանց քեզի ման չեմ կյալու,բալա ջան, Լավ ես կաղնել, *ջանիտ մատաղ*, ջա՛ն բալա<sup>17</sup>:

Վերոնշյալ օրորի վերջնատողերում օրոր երգողը օգտագործում է *զարթնիր* բառամիավորը, որը ենթադրաբար դառնում է փակող բանաձև.//*Զարթնիր տենամ որդի՞ ես քնել*//Ա՛յ բալանե՛, ա՛յ բալանե՛, ա՛յ բալա՛//:<sup>18</sup>

<sup>16</sup> Բանասաց՝ Շուշի-Շուշան Թումանեան. ծնուել է 1988թ. Լոռուայ Շնողում: Կրթութիւնը՝ բարձրագոյն, գերմանագէտ է: Նախնիներից մօրական կողմը Մուշ-Բայազետից է գաղթել ռուս-թուրքական պատերազմին (1877-78թթ.) եւ հաստատուել Քուչակում, իսկ հօրական կողմը Կողբ գիւղից է: Հօր պապը որդեգրուել է Շնողի Թումանեանների կողմից (գրառումը իմն է – Հ.Մ.):

<sup>17</sup> Հայ ազգագրություն և բանահյուսություն (կազմ.՝ Է. Խեմչյան), հ. 21, Տավուշ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, էջ 215:

Բառային կրկնաբանությունը (*ա՛յ կանչի* բացականչությամբ), սաստկական երանգ է տալիս, ամբողջ պատկերը գծագրվում է:

Հայ մեծերը հեղինակային օրորներով, ռազմի ու հայրենասիրական երգերով պատգամ են թողել սերունդներին վաղվա օրը լույսով դիմավորելու բարեկամեցողությամբ:

Ռ. Պատկանյանը այն տեսակետին էր, որ հայ ժողովրդի հոգեկան կերտվածքը և ազգային բնավորությունը պետք է մշակել այդ ժողովուրդը կազմող անձանց մանուկ հասակից: Մանկան դաստիարակությունը նրա համար մի կողմից՝ ազգային հոգեբանության դաստիարակություն էր, մյուս կողմից՝ հասարակական մարդու, կատարյալ քաղաքացու դաստիարակություն<sup>19</sup>: Ռ. Պատկանյանի *Արի՛, իմ սոխակ* օրորոցայինը արթնացում տեքստի բացառիկ օրինակ է.

Թո՛ղ որսըդ, արի՛, քաջասի՛րս բազե, *Բազեն որ եկավ՝ որդիս լըռեցավ,*  
Քու երգը գուցե իմ որդին կուզե... *Ռազմի երգերի ձայնով քընեցավ:*

Ռազմի երգի ձայնով է սնվում երեխան, ռազմերգով է սնվում: Ըստ էության, այս օրորը նույնպես արթնացումի տեքստ է. քիչ հավանական է, որ ռազմի երգերի ներքոնը տիրի երեխային:

Հովհ. Շիրազի բանարվեստում, ինչպես արդեն նշեցինք, ուրույն տեղ ունի օրորքի և օրորի նկարագիրը՝ որպես արթնացումի բացառիկ դրսևորում: Այս տեսանկյունից մեջբերենք հեղինակի *Նոր բալիկս (Միփանին)* բանաստեղծությունից պատառներ.

Նոր ձագս ուրիշ է, *օրոր մի՛ ասա,* *Իմ նորաբարուրը՝ և՛ ըմբոստ, և՛ խեղճ,*  
Չես տեսնում՝ բարուրը կտրատում է սա, *Ասես ծուռ Մհերն է Վանա ժայռի մեջ*<sup>20</sup>:

Ազգային մեծ բանաստեղծն օգտագործում է խոսքը, ասելիքը ոճավորելու հնչյունական ու պատկերավորման ամբողջական համակարգ՝

*Իմ ձագը թեկուզ մոր օրորն ի՛նչ կանի,* *Ժեռ բարուր բալիկս Մհերն է փոքրիկ,*  
*Օրորը կապանքից Մհեր չի հանի,* *Իմ ազգի լեռ բարուր պատկերն է գողտրիկ*<sup>21</sup>:

Առաջին տողում նշված *մոր օրորն ի՛նչ կանի* ասույթը խորքային է՝ բացառիկ ասելիքով. մոր օրորը միշտ մեղմ է, հանգիստ ու անրջուն:

*Չարթոնք* բառը դառնում է պատգամ-բանաձև շիրազյան նշված բանաստեղծության մեջ.

Օրոցքը շատ նեղ է, դուրս կուզե թռչել, *Շատ դարեր քնեցինք, զարթոնքից խոսա,*  
Շղթայված *զարթոնք* է բարուրի մեջ էլ... *Նոր բալիկս ուրիշ է, օրոր մի՛ ասա,*  
*Օրորի դար չէ,* ստինքդ հանիր՝ *Չարթոնքի կայծակե սուրբ կաթով սնիր*<sup>22</sup>:

Բանաստեղծը երկու իմաստամերձ բայերով՝ *զարթոնում է, զարթոնք է բերում*, մատնանշում է իր երազանքը՝ զավակին տեսնում է հայոց սուրբ լեզվի կրող, պահպանող և Վանա ու Սևանա ծովերն իրար միացնող.

Բալիկս *զարթոնում է, զարթոնք է բերում*, *Դու քնացնում ես, նա զարթոնում է, թո՛ղ,*

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 216:

<sup>19</sup> Մկրտչյան Վ., Ռափայել Պատկանյան, Երևան, «Հայաստան» հրատ., 1966, էջ 4:

<sup>20</sup> Շիրազ Հ., Իմոնց մանկությունը, Երևան, «Հայաստան» հրատ., 2012, էջ 28:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 28:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 28:

Ժպտում է Մասիսը լացող աչքերում... Քեզանից խելոք է բալիկս *զարթնող*...<sup>23</sup>

Նշենք կարևոր մի մեկնություն. *զարթնելը* գործընթաց է, իսկ *զարթոնքը*՝ եղելություն, իրողություն, որը արդեն վիճակ է... *Չարթնում է, զարթնել* հնչյունային բառախաղը՝ հարանունների կիրարկմամբ, ունի նաև հակադրություն այս պատկերի մեջ, դու քնեցնում ես, ինքը զարթնում է:

Թալինի բանահյուսական օրորի տեքստը ձևավորվում է հարսանեկան կարևոր բաղադրիչով՝ *կանաչ-կարմիր գոտիով*.

*Էլե՛ք, լաո՛, ձիեր հեձնինք,*                      Տու բզդիզ իս, պարով մեձնաս, հարս տառնաս...  
*Էրտանք հըսնինք Սուրմալու,*                      *Էլե՛ք, լաո՛, ձիեր հեձնինք,*  
*Գանաճ-զարմիր կողի պերիմ՝*                      *Էրտանք հասնինք Մուշ, Մասուն,*  
*Մախպոր գուլբանդ զարբելու:*                      *Էրտանք ի դես՝*  
*Օրոր րսիմ, շորոր րսիմ քնենաս,*                      *Մըր սարերուն սիրուն...*<sup>24</sup>

Ինչպես նկատելի է, գրական միջավայրում զարթնումի տեքստերը բավականին տարողունակ են ու տարածական:

Պ. Սևակի *Օրորոցային* բանաստեղծության մեջ օրորի՝ հանգստություն ու քուն բերող նկարագիրը կա.

Գիշերային մութը միշտ էլ քուն է բերում:

Եվ ահա ես՝

-*Քնե՛ք, - ձեզ եմ ասում մոր պես,*

-*Քնե՛նք, - ինձ էլ խառնում եմ ձեզ:*

-*Քնե՛նք,*

Որ գուր չմտածենք ծանր ու բարակ,

Որ մեզանից պոկենք ամեն մի մտորում,

Մեր բարձի տակ ճիւղենք ամեն խոկում ու խոհ:

*Քնե՛նք, թեպետ ըստ առածի՝*

*Մեկ է, իբրը, մեռել ու քուն:*

Բանաստեղծության հաջորդ տողերում զարգանում է արթնացման պահանջը.

-*Քնե՛ք ուրեմն, - ասում եմ ձեզ, -*

*Որ արթնանաք:*

*Արթնանալը շատ պետք է ձե՛զ,*

Մե՛զ՝

Ամենքի՛ս...

Այսպիսով՝ *զարթնել* և *զարթոնք* բառերը տեքստերի հյուսվածքում միահյուսվում են՝ դառնալով ցանկության բանաձև, կոչ, հորդոր՝ կորսված հայրենիքը հետ բերելու միտումով:

<sup>23</sup> Ծիրազ Հ., նշվ. աշխ., էջ 28:

<sup>24</sup> Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 19, Թալին/Ռ. Խաչատրյան/, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999, էջ 150:



*Եզրահանգում.* Ամփոփելով նշենք, որ բանահյուսական և հեղինակային օրորների համատեքստում բավականին մեծ թիվ են կազմում արթնացում բովանդակող տեքստերը, որոնք լեզվական տեսանկյունից նոր խոսք ու ասելիք ունեն: Կան օրորերգի տեսակներ, որոնք զարթնումի, վերելքի ուղեծիրով են առանձնացվում: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերնագրային մակարդակում կան օրորներ, որոնք չեն հիշվում/նշվում որպես օրորերգ, սակայն միջավայրը վկայում է օրորերգ լինելը:

## КОЛЫБЕЛЬНАЯ КАК ПРОБУЖДАЮЩИЙ ТЕКСТ

*Матикян А. Г.*

**Ключевые слова:** *колыбельная, автор, рассказчик, фольклор, колыбель, сон, формула, контекст, текст.*

В статье колыбельная представлена как пробуждающий текст. Мы выбрали колыбельные, носящие пробуждающий характер. Речь относится к смысловым пластам армянских колыбельных, которые удерживают взор ребенка в центре внимания Родины, злых сил, окружающего мира. И армянский фольклор, и литературная среда переплетаются с такими колыбельными текстами. Следует отметить, что колыбельные для пробуждения имеют явные и неявные способы выражения. Рассматриваются «пробуждающие» языковые элементы (զարթնի՛ր).

## LULLABY AS AN AWAKENING TEXT

*Matikyan H. H.*

**Key words:** *lullaby, author, narrator, folklore, cradle, sleep, formula, context, text.*

The paper presents the lullaby as an awakening text. We have selected the lullabies, that are of awakening nature. The speech refers to the semantic layers of Armenian lullabies that keep the child's eye into focus on the motherland, evil powers, the surrounding world. In essence, both Armenian folklore and literary environments are interwoven with such kind of lullaby texts. It should be mentioned that awakening lullabies have explicit and implicit ways of expression. The paper dwells upon the 'awakening' linguistic elements (զարթնի՛ր).

## Գ ր ա կ ա ն ո թ յ ո Ւ Ն

1. Արովյան Խ., Վերք Հայաստանի, Երևան, ԵՂ հրատ., 1981:
2. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., հ.1, 1976:
3. Բեղիբյան Պ., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, ԵՂ հրատ., Երևան, 2011:
4. Գրիգորյան Ռ., Հայ ժողովրդական օրորոցային և մանկական երգեր, Երևան, Հայկ.ՍՍՀ ԳԱ հրատ., 1970:

5. Խրիմյան Հայրիկ, Դրախտի ընտանիք, Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2011: Կոմիտաս, Երկերի ժողովածու, №3, Խմբերգեր / (Խմբ.՝ Ռ. Ա. Աթայան). Երևան, «Հայաստան» հրատ., 1969:
6. Հայ ազգագրություն և բանահյուսություն, (Ռ. Գրիգորյան), հ. 14, Գեղարքունիք, Հայկական ՄՍՀ ԳԱ հրատ., 1983:
7. Հայ ազգագրություն և բանահյուսություն, (Ռ. Խաչատրյան), հ. 19, Թալին /, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999:
8. Հայ ազգագրություն և բանահյուսություն (կազմ.՝ Է. Խեմչյան), հ. 21, Տավուշ, ՀՀ ԳԱԱ Հայ ազգագրություն և բանահյուսություն (կազմ.՝ Է. Խեմչյան), հ. 21, Տավուշ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000:
9. Հայ հին և միջնադարյան քնարերգություն (կազմ.՝ Ս. Ս. Հակոբյան, Է. Պ. Չալիկյան), «Լույս», Երևան., 1987:
10. Մալխասեանց Ս., Հայերեն բացատրական բառարան, հ. 1, էջ 263, Հայկական ՄՍՌ՝ Պետհրատ., Երևան, 1944:
11. Մկրտչյան Վ., Ռավիայել Պատկանյան, Երևան, «Հայաստան» հրատ., 1966:
12. Շիրազ Հ., Երկեր, հ. 4, Երևան, «Սովետական գրող», 1986:
13. Շիրակ երգարան. 50 -ամեակ, կազմող եւ խմբագիր Կարապետ Հաննէսեան, Պէյրոյթ, 2010:
14. Պատկանյան Ռ., Երկեր, Երևան., «Սովետական գրող», 1980:

*Ընդունվել է՝ 29. 09. 2021  
Գրախոսվել է՝ 22. 10. 2021  
Հանձնվել է տպ.՝ 15. 11. 2021*

**Տեղեկություններ հեղինակի մասին**

**Հասմիկ ՄՍՏԻՎՅԱՆ**՝ բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտություններն կենտրոնի գիտաշխատող, Շիրակի պետական համալսարանի անգլերեն լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, էլ. հասցե՝ hasvrej@mail.ru